սքանչելի ներդաշնակութեամբ գրաւել էր ժողովրդին։ Անկարգելի էր այն շքեղութիւնը, որով կատարուեցաւ հիմնարկութիւնը։ Վեհափառ Տէրը առարկային յարմար աղօթքի և մաղթանքի կարգը կատարելուց յետոյ սրսկման ջուր օրհնեց բոլոր հոգեւորական դասի ձայնակցութեամբ. Կարապետ եպիսկոպոսը ըստ կանխագոյն հրամանի Նորին Օծութեան ասաց հիմնարկութեան հանդիսին յարմար մի ճառ. որով հրաւիրում և յորդորում էր Բագուեցոց լինել ազնիւ քաղաքացի, ևն։ Իսկ ուսումնարանի հիման մարմարօնեայ քարը, որ արձանագրուած դրուած էր սեղանի վրայ. Նորին Օծութեան հանդէպը[1]) յանձնեցաւ Բագուի Առաջնորդ Մեսրովբ Արքեպիսկոպոսին հիման մէջ դնելոյ. ուստի և քարը մի դպրի գիրկը տալով և օրհնեալ ջուրը կոնքով միւս դպրի գիրկը՝ Մեսրովբ Արքեպիսկոպոսը տարաւ և ջուր սրսկելով այն քարի և հիման վրայ՝ քարը դրեցին վարպետները մի փորած քարի մէջ և խուփը դնելով երեսին՝ քարով ու կրով ամուր ծածկեցին, ի յաւիտենական յիշատակ Բագուայ Հայոց։

Հանդիսին ներկայ էին բոլոր պաշտօնական անձինք Հայ, Ռուս, Թուրք և ամենայն ազգք, որք գտնվում էին Բագույում։

Հայ ժողովուրդը 100 մարդոց ճաշ տուեց Պ. Սամուէլ Բաղրեանի տանը, որոց գլխաւորն էր Նորին Օծութիւնը, որոյ ի պատիւ գտնվում էին բոլոր բարձր-աստիճան անձինք։ Իսկ 500 մարդոց նախաճաշիկ տուեց հենց նոյն իսկ ուսումնարանի շինութեան ընդարձակ տեղումն բացօթեայ։ Ճաշին երգում էր Կարամիրզայի խումբը, որ բաղկացած էր Հայ երիտասարդներից և մեր դպրոցի աշակերտներից. Վեհափառ Տէրը Դաւիթ մարգարէի խօսքը բնաբան դնելով՝ որ ասէ «Ուրախ եղաք մեք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն՝ յորս տեսաք ըզչարչարանս», և համեմատելով հին ժամանակի մեր ազգի տխուր անցեալը, և ներկայ անդորը վիճակը, ուրախ և զուարթ ձայնով ասաց. մենք մեր ներկայ անդորրութեամբ պարտական ենք Ռուսաց Կայսրների հովանաւորութեանը, և այս ասելով առաջարկեց բաժակ Կայսեր թանկագին կենաց համար. բոլորը ոտքի վրայ

---

[1]) Արձանագիրը տես գրքիս յերես 381։